ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/93

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Էրիզ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/13» էլեկտրոնային աճուրդ, ձավարեղենի, մակարոնեղենի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԷԱՃԱՊՁԲ-7/13-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4765-2020 գրությամբ «Էրիզ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.03.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/994-2020 գրության հիման վրա, 31.03.2020թ.-ին «Էրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 31.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/93 համարի ծածկագիրը և 31.03.2020թ.-ին հրապարակվել է www.gnumner.am կայքում:

15.04.2020թ.-ին և 30.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.04.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.03.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/1040-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանությունը 2020թ. մարտի 20-ին միակողմանի մասնակի լուծել է՝

1. «Էրիզ» ՍՊԸ-ի հետ 14.03.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/13-1 գնման պայմանագրին կից N 1 համաձայնագիրը,

2. Ա/Ձ Աբգար Ավետիսյանի հետ 28.12.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/2-1 գնման պայմանագրին կից 30.08.2019թ կնքված համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի և համաձայնագրերի լուծման վերաբերյալ գրությունը 23.03.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Էրիզ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Էրիզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.04.2020թ.-ի գրությամբ դիմել է «Էրիզ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4765-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.03.2019թ.-ին կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/13-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 10.05.2019թ.-ին կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/13-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի մայիս ամսից մինչև սեպտեմբեր ամիսը ներառյալ:

www.gnumner.am համացանցային կայքում 23.03.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ԴՎԱ/1038 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.03.2019թ.-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/13-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 20.03.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.03.2020թ. թիվ 26/26-1/4765-2020 գրությամբ «Էրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ

նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.03.2019թ.-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/13-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 10.05.2019թ.-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/13-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի մայիս ամսից մինչև սեպտեմբեր ամիսը ներառյալ:

www.gnumner.am համացանցային կայքում 23.03.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ԴՎԱ/1038 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.03.2019թ.-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/13-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 20.03.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ տվյալ դեպքում, «Էրիզ» ՍՊԸ-ի կողմից ապրանքը տեխնիկական բնութագրով սահմանված ժամկետում չի մատակարարվել, վերջինիս կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 20.03.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 23.03.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էրիզ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.03.2020թ. թիվ 26/26-1/4765-2020 գրությամբ «Էրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/93 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էրիզ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ